Հաստատում եմ

դպրոցի տնօրեն՝ Digitally signed by KOCHARYAN /Վ. Քոչարյան /

«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

/Հաստատված է դպրոցի մանկավարժական խորհրդի ___31.08.2023թ.__ թիվ 1 նիստում/

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ

ՏՆՕՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձինք	Նշում
1	Հաստատման ներկայացնել տարեկան աշխատանքային պլանը:	Օգոստոս	Տնօրենի ուս-դաստիարակչ.աշխատ.գծով տեղակալ	
2	Սահմանված կարգով ու ժամկետներում վարել աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագիրը:	ՈՒստարվա ընթացքում	Տնօրենի ուս-դաստիարակչ.աշխատ.գծով տեղակալ	
3	ՈՒսուցիչներին ժամանակին ապահովել ուսումնական ծրագրերով և երաշխավորված մեթոդական ձեռնարկներով:	Օգոստոս	Տնօրեն, Տնօրենի ուս-դաստիարակչ.աշխատ.գծով տեղակալ	
4	Ստուգել և հաստատել ուսուցիչների առարկայական թեմատիկ պլանները: Տնօրինության ներկայացնել թեմատիկ պլաններում պետական առարկայական նոր չափորոշչի և ծրագրերի համապատասխանության մասին հաշվետվություն:	1-08 Սեպտեմբեր	Տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ	
5	Կատարել դպրոցի սպասարկման տարածքում բնակվող դպրոցահասակ երեխաների հաշվառում:	օգոստոս	Դասվարներ, Տնօրենի ուսումնադաստ. աշխ. գծով տեղակալ	
6	Սահմանված կարգով ձևավորել աշակերտական խորհուրդ և օժանդակել նրա գործունեությանը:	Սեպտեմբեր	Տնօրենի ուսումնադաստ. աշխ. գծով տեղակալ, Տնօրեն, դաս.աշխ. կազմակերպիչ	
7	Կահավորել դասասենյակները և ուսումնական կաբինետները՝ դրանք հագեցնելով ուսումնադիդակտիկ նյութերով:	Օգոստոս-Սեպտեմբեր	Դասղեկներ, Տնօրենի ուսումնադաստ. աշխ. գծով տեղակալ	
8	Սահմանված կարգով ձևավորել դասարանական ծնողական խորհուրդներ՝ ապահովելով ծնողների մասնակցությունը ուսումնական գործընթացի կազմակերպմանը:	Սեպտեմբեր	Տնօրենի ուսումնադաստ. աշխ. գծով տեղակալ դասղեկներ,դասվարներ	
9	ՈՒսուցիչների, դասղեկների,մ/մ նախագահների հետ պարբերաբար տանել բացատրական աշխատանքներ, կազմակերպել խորհրդատվական-մեթոդական լսումներ՝ուսումնադաստիարակչական գործընթացը արդյունավետ կազմակերպելու նպատակով:	Մշտապես	Տնօրեն, Տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ	

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձինք	Նշում
10	Հանձնարարել առարկայական մասնախմբերին կազմել տարեկան աշխատանքային պլան և ներկայացնել հաստատման:	Օգոստոս	Տնօրենի ուս-դաստիարակչ.աշխ ատ.գծով տեղակալ, Մ/Մ նախագահներ	
11	Ուսուցիչներին ապահովել ուսումնական ծրագրերով, ուսուցչի ձեռնարկներով, ուսումնամեթոդական և տեղեկատվական այլ նյութերով:	Մշտապես	Տնօրենի ուսումնա դաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ	
12	Կազմակերպել միջոցառում նվիրված անկախության օրվան:	21-ը Սեպտեմբեր	Տնօրենի ուսումնադաստ. աշխ. գծով տեղակալ զինղեկ	
13	Հետևել (մատյան.եմիս.ամ էլեկտրոնային կայքում) ուսուցիչների կողմից կատարվող գրանցումներին և էլեկտրոնային մատենավարությանը:	Մշտապես	Տնօրենի ուս-դաստիարակչ.աշխ ատ.գծով տեղակալ	
14	ՈՒսումնական մասնաշենքի յուրաքանչյուր հարկում սահմանել ամենօրյա հերթապահություն:	Մշտապես	Տնօրեն, Տնօրենի ուսումնադաստ. աշխ. գծով տեղակալ	
15	Դասալսումներին կարևոր տեղ հատկացնել ուսուցչի կողմից իրականացվող դաստիարակչական աշխատանքին /ըստ դաստիարակության ուղղությունների /ելնելով դասավանդվող առարկայի և ուսուցվող թեմայի առանձնահատկություններից:	Մշտապես	Տնօրենի ուսումնադաստիար ակչական աշխատանքների գծով տեղակալ	
16	կազմել հաստատության ուս.պլանը ըստ ՀՀ ԿԳՄՄՆ 2023թ. օգոստոսի հրամանի	Օգոստոս	Տնօրենի ուսումնադաստիար ակչական աշխատանքների գծով տեղակալ	
17	Ըստ տնօրինության կողմից հաստատված ժամանակացույցի՝ համապատասխան ուղեցույցներով քննական դասարանների աշակերտներին նախապատրաստել քննություններին:	2-ՐԴ կիսամյակ	Տնօրենի ուսումնադաստիար ակչական աշխատանքների գծով տեղակալ	
18	Կազմել դասացուցակ ըստ ուղեցույցի պահպանելով սահմանված նորմատիվային ծավալները(դասաժամ)	Սեպտեմբերի 1-4	Տնօրենի ուսումնադաստիար ակչական աշխատանքնրի գծով տեղակալ	

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձինք	Նշում
19	Վերահսկել ուսուցիչների կողմից համագործակցային ուսուցման աշակերտակենտրոն դաս կազմակերպելու, դասավանդման ընթացքում արդիական մանկավարժության և նորագույն մեթոդների կիրառման գործընթացը:	Մշտապես	Տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ	
20	Քննարկել առարկայական մեթոդ միավորումների համատեղ հաղորդումը ուսուցման ժամանակակից մեթոդների ներդրման, բաց դասերի կազմակերպման ուղղությամբ տարվող աշխատանքները:	Եռամսյակը մեկ անգամ	Տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ	
21	Կազմել և գործածության մեջ դնել ուսուցիչների հաշվառման տեղեկագիրը:	Մշտապես	Տնօրենի ուս-դաստիարակչ.աշխատ.գծով տեղակալ	
22	ՈՒսումնասիրել համակարգչային կաբինետում դասավանդման գործընթացը:	ՈՒստարվա ընթացքում	Տնօրենի ուսումնա-դաստ. աշխատ. գծով տեղակալ	
23	Համակարգել ուսուցիչների բաց թողած, փոխարինած և լրացուցիչ պարապած դասաժամերը:Արդյունքները ներկայացնել տնօրենին և գլխավոր հաշվապահին աշխատավարձը հաշվարկելու նպատակով:	ՈՒստարվա ընթացքում	Տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ	
24	Պարբերաբար ստուգել էլեկտրոնային դասամատյանների վարման կարգը:	Մշտապես	Տնօրենի ուս-դաստիարակչ.աշխատ.գծով տեղակալ	
25	ՈՒսումնասիրել մասնախմբերի կատարած աշխատանքը: Արդյունքները քննարկել տնօրինության ընդլայնված նիստերում:	ՈՒստարվա ընթացքում	Տնօրենի ուս-դաստիարակչ.աշխատ.գծով տեղակալ	
26	Ստուգել լաբորատոր և գործնական աշխատանքների կատարման ընթացքը բնագիտական առարկաներից:	Մշտապես	Տնօրենի ուս-դաստիարակչ.աշխատ.գծով տեղակալ	
27	Ստուգել տարբեր առարկաներից տրված գրավոր աշխատանքների քանակը՝ արդյունքները քննարկել մանկխորհրդի նիստերում:	Կիսամյակների վերջում	Տնօրենի ուս-դաստիարակչ.աշխատ.գծով տեղակալ	
28	Յուրաքանչյուր երկուշաբթի օր դասերը սկսելուց առաջ կատարել ՀՀ օրհներգը:	Յուրաքանչյուր երկուշաբթի	Տնօրենի ուսումնադաստ. աշխ. գծով տեղակալ	
29	Վերաձևավորել և թարմացնել ազգային հերոսների և արցախյան երկրորդ պատերազմում զոհվածների փառքի անկյունը:	Սեպտեմբեր	Տնօրենի ուսումնադաստ. աշխ. գծով տեղակալ զինղեկ	

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձինք	Նշում
30	Անցկացնել առարկայական մասնախմբերի ղեկավարների սեմինար խորհրդակցություն:Լսել մասնախմբերի ղեկավարների ամսեկան հաշվետվությունը:	Ամիսը մեկ անգամ	Տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ	
31	Ստացվող մեթոդամանկավարժական և ուսումնաօժանդակ գրականությունը, ամսագրերը, ձեռնարկները ժամանակին տրամադրել համապատասխան մասնախմբերին՝ վարելով դրանց հատկացման առանձին մատյաններ:	Մշտապես	Տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ	
32	Յուրաքանչյուր մասնախմբից պահանջել կազմակերպելու տարեկան առնվազն 1-2 բաց դաս,4-5 փոխադարձ դասալսում՝ արձանագրելով դրանք:	ՈՒստարվա ընթացքում	Տնօրենի ուսումնադաստիարակչ.աշխատ.գծով տեղակալ	
33	Ստուգել մասնախմբերի նիստերի արձանագրությունների մատյանների վարման վիճակը, տալ անհրաժեշտ ցուցումներ:	ՈՒստարվա ընթացքում	Տնօրենի ուս-դաստիարակչ.աշխատ.գծով տեղակալ	
34	Ապահովել ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման տասը միավորային սանդղակով մեթոդական ցուցումների կիրառումը:Անհրաժեշտության դեպքում ստեղծել հարցաշարերի բանկ և 5-11-րդ դասարաններում աշակերտների գիտելիքները ստուգել նաև համակարգիչների միջոցով:	ՈՒստարվա ընթացքում	Տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ	
35	Կազմակերպել աշնանային առաջադրանքներ ստացած աշակերտների,գիտելիքների ստուգման գործընթացը:	Օգոստոս	Տնօրենի ուս-դաստիարակչ.աշխատ.գծով տեղակալ	
36	Դպրոցի տնօրենին կից խորհրդակցություններում ըստ կարևորության քննարկել դպրոցի գործունեությանը վերաբերվող հարցեր	Մշտապես	Տնօրենի ուս-դաստիարակչ.աշխատ.գծով տեղակալ	
37	Վերաձևավորել և թարմացնել <<ՀՀ պետական խորհրդանիշներ>> անկյունը և Ղարաբաղյան երկրորդ պատերազմին ու զոհերին նվիրված անկյունը:	Սեպտեմբեր	Տնօրենի ուսումնադաստ. աշխ. գծով տեղակալ զինղեկ	
38	Ամուր հիմքերի վրա դնել աշակերտ-ծնող-դպրոց-ընտանիք կապը:	ՈՒստարվա ընթացքում	Տնօրենի ուսումնադաստ. աշխ. գծով տեղակալ ,դասղեկներ,դասվարներ	

39	Ծրագրերի և թեմատիկ պլանների կատարողականները մշտադիտարկել ըստ ամիսների	Յուրաքանչյուր ամիս	Տնօրենի ուսումնադաստ. աշխ. գծով տեղակալ	
40	Կազմակերպել դպրոցականների առարկայական օլիմպիադայի ներդպրոցական փուլ ըստ սահմանված առարկայացանկի և ծամանակացույցի:	Դեկտեմբերի 1-8	Տնօրենի ուսումնադաստ. աշխ. գծով տեղակալ	
41	ՈՒշադրության տակ պահել գրավոր աշխատանքների՝ գործնական, թեմատիկ և ուսումնական նախագծերի իրականացմանը, ըստ ուս. պլանի հատկացված ժամաքանակի և մանկխորհի որոշումների:	ՈՒստարվա ընթացքում	Տնօրենի ուսումնադաստ. աշխ. գծով տեղակալ	
42	Պարբերաբար տնօրինության կողմից հանձնարարել գրավոր աշխատանքներ հիմնականում 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարաններում:	ՈՒստարվա ընթացքում	Տնօրենի ուսումնադաստ. աշխ. գծով տեղակալ ,դասղեկներ,դասվարներ	
43	ՈՒշադրության կենտրոնում պահել ետ մնացող և թույլ առաջադիմություն ունեցող աշակերտներին : Աշխատանքներ տանել անհատական ուսուցման կարիք ունեցող սովորողներին ուսումնական գործընթացին ներգրավվելու ուղղությամբ:	ՈՒստարվա ընթացքում	Տնօրենի ուսումնադաստ. աշխ. գծով տեղակալ	
44	Սովորողներին ըստ նրանց հետաքրքրությունների, ընդունակությունների, նախասիրությունների և կարիքի , ընդգրկել դպրոցական և արտադպրոցական աշխատանքներում:	ՈՒստարվա ընթացքում	Տնօրենի ուսումնադաստ. աշխ. գծով տեղակալ	
45	Ուսումնական մասնախմբերի հետ համագործակցությամբ օգնել սովորողներին՝ 7-12-րդ դասարանների աշակերտներին ընտրել առնվազն մեկ ուսումնական նախագիծ և իրականացնել:	ՈՒստարվա ընթացքում	Տնօրենի ուսումնադաստ. աշխ. գծով տեղակալ, մմ. մասնախմբերի ղեկավարներ	
46	Վարել սուցիչների հաճախումների հաշվառման մատյանը: Հետևել, որ բաց թողնված դասաժամերը լրացուցիչ լրացվեն սահմանված կարգով:	ՈՒստարվա ընթացքում	Տնօրենի ուսումնադաստ. աշխ. գծով տեղակալ	
47	Մշտադիտարկել բոլոր դասարաններում տրվող գրավոր աշխատանքները, դրանց քանակը, որակը և համապատասխանությունը անցած նյութին: Քննարկել մմ նիստերում:	ՈՒստարվա ընթացքում	Տնօրենի ուսումնադաստ. աշխ. գծով տեղակալ, մմ. ղեկավարներ	

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձինք	Նշում
48	Հետևել դպրոցի ուսումնական ռեժիմի կատարմանը:Կազմել ուսուցիչների հերթապահության ցուցակ:Աջակցել առարկայական արտադասարանական խմբակների ձևավորման գործընթացին:	Մշտապես	Տնօրենի ուսումնա դաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ	
49	Հաշվառել սոց.անապահով ընտանիքների,միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաներին:Նրանց օգնելու նպատակով համագործակցել գյուղապետարանի հետ:	Սեպտեմբեր	Տնօրեն, Տնօրենի ուսումնադաստ. աշխ. գծով տեղակալ Մ/Կ կազմակերպիչ	
50	Սոց.անապահով ընտանիքների,միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաներին անվճար դասագրքերով ապահովելու նպատակով կազմել ցուցակ՝համաձայնեցնելով մանկխորհրդի և ծնողխորհրդի հետ:	Սեպտեմբեր	Տնօրեն, Տնօրենի ուսումնադաստ. աշխ. գծով տեղակալ, դասղեկներ,ծնողխոր հուրդ	
51	ՈՒսումնասիրել աշակերտների բանավոր և գրավոր կապակցված խոսքի, հաշվողական ունակությունների և մաթեմատիկական տրամաբանության, աշխատանքային հմտությունների ձևավորման վիճակը:Արդյունքները քննարկել մ/մ նիստերում:	Մշտապես	Տնօրենի ուսումնադաստիար ակչական աշխատանքների գծով տեղակալ	
52	Հետևել կազմակերպվող էքսկուրսիաների ուսուցողական և դաստիարակչական նպատակները իրականացնելու համար /ըստ համադպրոցական և դասարանական միջոցառումների ժամանակացույցի/:	Մշտապես	Տնօրենի ուսումնադաստիար ակչական աշխատանքների գծով տեղակալ	
53	Ապահովել ամառային առաջադրանքներ ստացած աշակերտների վերաքննությունների գործընթացը և արդյունքները ներկայացնել մանկխորհրդի նիստի քննարկմանը:	ՈՒստարվա ընթացքում	Տնօրենի ուսումնադաստիար ակչ.աշխատ.գծով տեղակալ	
54	Տնօրենին կից խորհրդակցությունում լսել արտադասարանական արտադպրոցական աշխատանքների գծով փոխտնօրենի հաղորդումը գրադարանավարի գործունեության վերաբերյալ:	Մշտապես	Տնօրենի ուսումնադաստիար ակչական աշխատանքների գծով տեղակալ, գրադարանավար	
55	Աջակցել արտադասարանական պարապմունքների գրաֆիկ կազմելուն հաշվի առնելով աշակերտների ծանրաբեռնվածությունը:	ՈՒստարվա ընթացքում	Տնօրենի ուս-դաստիարակչ.աշխ ատ.գծով տեղակալ	

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձինք	Նշում
56	Ժամանակին կազմել ուսումնասիրությունների և ստուգումների վերաբերյալ զեկուցագրեր,տեղեկանքներ,հաշվետվություններ աշակերտների շարժի և առաջադիմության տեղեկագիր,անհրաժեշտ ցուցանշային տեղեկատվություններ,քննարկումների և վերադաս մարմինների /կամ շահագրգիռ կազմակերպություններին /ներկայացնելու համար:	ՈՒստարվա ընթացքում	Տնօրենի ուսումնադաստիարակչականաշխատանքների գծով տեղակալ	
57	Դասղեկների հետ համատեղ բացատրական աշխատանք տանել /ընդհանուր և դասարանական ժողովներում /երեխաների համար ընտանիքում դասապատրաստման և ֆիզիկական զարգացման նպատակով պայմաններ ստեղծելու համար:	Մշտապես	Տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ	
58	ՈՒսումնասիրել /ստուգել /լաբորատոր և գործնական աշխատանքների գործընթացը:Հետևողական աշխատանք տանել եղած հնարավորությունները լիարժեք օգտագործելու համար:	ՈՒստարվա ընթացքում	Տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ	
59	ՈՒսուցիչների հետ տարվող բացատրական և մեթոդական աշխատանքի,դասավանդման լավագույն փորձի կիրառմամբ հասնել այն բանին,որ իրականացվի ուսուցման և դաստիարակության միասնությունը:	ՈՒստարվա ընթացքում	Տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ	
60	Սովորողի իրավունքներն ու պարտականությունները հասանելի դարձնել յուրաքանչյուր աշակերտի,նրանց մեջ դաստիարակել վարքի կանոնները բարեխղճորեն կատարելու և պարտաճանաչ սովորելու պատասխանատվության զգացում:	ՈՒստարվա ընթացքում	Տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ	
61	Մեթոդական-խորհրդատվական աշխատանքների դասլսումների և առաջավոր փորձի հիման վրա աշխատանք տանել ուսուցիչների հետ դասավանդման ուսուցչակենտրոն դիրքորոշումից աշակերտակենտրոն մոտեցման անցնելու համար:	ՈՒստարվա ընթացքում	Տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ	

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձինք	Նշում
62	Դասղեկներին և դասվարներին տալ ցուցումներ դասարանի ղեկավարի տարեկան աշխատանքային ծրագրի արդիականությունը և գործնական ուղղվածությունը ապահովելու համար,նրանց տրամադրելով դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանը:	22-30.Օգոստոս	Տնօրենի ուսումնադաստիար ակչական աշխատանքների գծով տեղակալ	
63	ՈՒսուցիչների համար գործող սեմինարներում կարևոր ուշադրություն դարձնել ուսուցման արդիական մեթոդներին,մասնագիտական գիտելիքների խորացմանը,կրթական չափորոշիչներին և գիտելիքների գնահատման նոր հայեցակարգին անցնելու օբյեկտիվ անհրաժեշտության,աշխատանքի օպտիմալացման հիմնախնդիրներին,տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների միջոցով,ուսուցման կազմակերպմանը,ժողովրդավարական կրթության սկզբունքներին,մանկավարժական համագործակցությանը,առաջավոր փորձին վերաբերվող հարցերին:	Մշտապես	Տնօրենի ուսումնադաստիար ակչական աշխատանքների գծով տեղակալ	
64	ՈՒսուցիչների համար կազմակերպել դասախոսություններ մանկավարժական կոլեկտիվի հետ տարվող աշխատանքները բաժնի թեմաներով:Սոցիալ-հոգեբանական գործոնների հաշվառմամբ ապահովել ուսուցիչ-աշակերտ համագործակցության,ծնող-դպրոց կապի արդյունավետությունը:	Մշտապես	Տնօրենի ուսումնադաստիար ակչական աշխատանքների գծով տեղակալ	
65	Ստեղծել հերոսական փառքի անկյուն,լուսաբանել Ղարաբաղյան ազատամարտի հերոսների ու նրանց սխրանքների,հայրենական մեծ պատերազմի հայ հերոսների և անվանի զորավարների մասին:	ՈՒստարվա ընթացքում	Տնօրենի ուսումնադաստ. աշխ. գծով տեղակալ	

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձինք	Նշում
66	Տնօրենի տեղակալների,կառավարման խորհրդի անդամների,առարկայական մեթոդմիավորումների/մասնախմբերի/նախագահների միջոցով ստուգել զննական և լաբորատոր պարագաներ,տեղեկատվական և համակարգչային միջոցների օգտագործման վիճակը:	Մշտապես	Տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ	
67	Կատարած դասալսումների,տրված գրավոր աշխատանքների,հանրակրթության համակարգի մարմինների կողմից կատարած ստուգումների արդյունքներով մանկավարժական խորհրդի նիստում քննարկել հանրակրթական պետական կրթակարգի,միջնակարգ կրթության պետական չափորոշիչի պահանջների իրականացման ուղղությամբ տարվող աշխատանքների վիճակը և հետագա անելիքների հարցը:	Մշտապես	Տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ Մ/Մ նախագահներ	
68	Հետևել, որ ռազմագիտության առարկայի պետական ուսումնական ծրագիրը յուրացնեն դպրոցի նախազորակոչային տարիքի բոլոր պատանիները:	Մշտապես	Տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ ,	
69	Հետևել,որ նախազորակոչային տարիքի բոլոր աշակերտները ըմբռնեն զինվորական երդման համազորային կանոնադրությունների պահանջներ և նրանց մեջ դաստիարակել դրանք անվերապահորեն կատարելու պատրաստակամություն:	ՈՒստարվա ընթացքում	Տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ ,	
70	Սահմանել խիստ վերահսկողություն պարբերաբար ուշացող և անհարգելի բացակայող աշակերտների նկատմամբ:	ՈՒստարվա ընթացքում	Դասղեկներ Տնօրենի ուսումաշխ. գծով տեղակալ , Տնօրեն, դաս.աշխ. կազմակերպիչ	
71	Կազմել աշակերտների հաճախումների հաշվառման մատյան :Յուրաքանչյուր ամսվա վերջում տնօրինության խորհրդակցություններում քննարկել աշակերտների հաճախումների հարցը:	Մշտապես	Դասղեկներ, Տնօրենի ուսումնադաստ. աշխ. գծով տեղակալ , Տնօրեն, դաստ.աշխ. կազմակերպիչ	
72	ՈՒսումնասիրել խմբակների կատարած աշխատանքը: Արդյունքները քննարկել տնօրինության ընդլայնված նիստերում:	ՈՒստարվա ընթացքում	Տնօրենի ուսումնադաստ. աշխ. գծով տեղակալ	

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձինք	Նշում
73	ՈՒսումնասիրել դասղեկների կատարած աշխատանքը: Արդյունքները քննարկել տնօրինության ընդլայնված նիստերում:	ՈՒստարվա ընթացքում	Տնօրենի ուսումնադաստ. աշխ. գծով տեղակալ ,	
74	Հետևել դասղեկական ժամերի և խմբակների գործունեությանը, կատարել լսումներ և քննարկումներ՝ արդյունքները ներկայացնել տնօրենին	Ըստ ժամանակացույցի	Տնօրենի ուսումնադաստ. աշխ. գծով տեղակալ ,	
75	Սովորողների գիտելիքների որակի բարձրացումը,ուսուցման նկատմամբ նրանց հետաքրքրասիրությունները և հակումները խթանելու համար կազմակերպել առարկայական շաբաթներ:	Մշտապես	Տնօրինություն	
76	Ստուգել կատարողական կարգապահության վիճակը կոլեկտիվի գործունեության օղակներում / ոլորտների ընտրությունը կատարել իրավիճակի թելադրանքով և կարևորությամբ/,և քննարկել տնօրենին կից խորհրդակցությունում:Անհրաժեշտության դեպքում տվյալ հարցը տեղափոխել մակխորհրդի նիստի քննարկմանը:	Մշտապես	Տնօրինություն	
77	Ըստ տնօրինության կողմից հաստատված ժամանակացույցի ՝ կազմակերպել կոնսուլտացիոն պարապմունքներ քննական դասարաններում:	Մայիս	Տնօրենի ուսումնադաստիարակչ.աշխատ.գծով տեղակալ	
78	Ըստ տնօրինության կողմից հաստատված ժամանակացույցի ՝ համապատասխան ուղեցույցներով քննական դասարանների աշակերտներին նախապատրաստել քննություններին:	2-ՐԴ կիսամյակ	Տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ	
79	ՈՒսումնական գործընթացի ավարտից 15օր առաջ ,120-200 ժամ բացակայություն ունեցող սովորողների համար կազմել և տնօրենի հաստատմանը ներկայացնել քննական առարկաների ցանկը և ժամանակացույցը: Կազմել, քննարկել ժամանակացույցը և իրականացնել:	Մայիս	Տնօրեն, տնօրենի ուսումնադաստիարակչ.աշխատ.գծով տեղակալ	